

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌՆԱԳԻՐԲ Ս ՂԱՋԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շարք տես Բաղմ. 1924 թ. 12)

ԺԱ.

ՄԱՐԴԱԿԱՆ ՄՈՒԹԻՒՆ

Փոքրիկ հատոր մ'է այս ձեռագիրը, որ կը կրէ 1431 թուահամարը. կաշեկազմ է, հաստ կողքերով, որոնց զրաթ էջերուն վրայ դրոշմուած են թռչուններ՝ բոլորն ալ մէկ ձև և շատ տգեղ. և ասոնց հետ նաև տեսակ մը կնիք՝ որոնց մէջ կը կարդացուի Երկաթագիր (Բժի) (ԾԿ) բառը: Թռչուններուն թիւը առաջին էջին վրայ 13 է, իսկ կնիքինը 4: Երկրորդ էջին վրայ թռչունները 10 հատ են, և կնիքը 8: Առաջին էջին վրայ կնիքները բազմապատկութեան ձևի մը չորս միջոցներուն մէջը դրոշմուած են՝ խաչ մը ձևացնելու համար. իսկ երկրորդին վրայ չորսը խաչի մը հորիզոնական թեւին վրայ քով քով են, մէկ մէկ հատ ալ չորս միջոցներուն մէջը:

Մեծութիւնն է 20 հր.մեղր, լայնութիւնը 14,5 հր.մեղր, իսկ թանձրութիւնը հազիւ 2/4 հր.մեղր:

Թուղթը հաստ բամբակեայ է. գիրը է նոսր երկսիւն, լայն լուսանցքներով, ունի 145 թերթ և 72 էջ գրուած:

Ձեռագրին պարունակութեան նիւթն է «ՄԱՐԴԱԿԱՆ ՄՈՒԹԻՒՆ», և կը սկսի՝ «Յուդաքս յնորստեան մարդոյն կազմութեան» վերնագրով. պարզ մտադրութիւն մը սակայն կամ քաղաքատեմիւն մը ցոյց կու տայ՝ թէ քաղաքաւորութիւնն է այն մասամբ Գրիգոր Նիւսացիի Գիրք յնորստեան մարդոյն թարգմանութեանն, և մասամբ Ամիրտովմարի Մարդակազմութեանն, որու վրայ խօսած եմ յառաջագոյն:

Առողջապահական խրատներ ալ կը պարունակէ. հետաքրքրական է վերջին խրատը երբ կը գրէ.

« Արդ միաբանութիւն հնդկաց և հոռոս մոց իմաստասիրաց և բժշկապետաց, որ ընտրեցին զկերակուրան և զըմբելիս և զգրեցին վասն օգտութեան, քանզի և յետամենայն խրատուց ասացին և զայս. « եթէ կամիս զառողջութիւն քո մի՛ յաւաճախէր յուսեցիս կամ ըմպելիս, զոր « ստամոքս ոչ բանայ թէպէտև ահաւոր « է քեզ որկորդ մի այգուտէր և զոր « ուտես հալել չ'լինի ստամոքսիտ. այլ « մի՛ ուտես և ի կրակի վրայ կրակ ար. « կաններ նոյնպէս և ըմպելիս մի ջուրն « յաճախէր և մի ի գինի, և որ ժամ ի « սոյն պատրաստութեանս գտանի առողջ « ջութիւն տվողին աստուծոյ ամէն »:

Այսչափ խօսք շատակերութեան և արբեցութեան դէմ, այսօրուան համար իսկ խոտելի չէ. ասոնց գրողն է՝ կամ աւելի ըսենք հաւաքողը՝ ոմն ԿեփԱՍ ԲԺԻՇԿ, յայտնի չէ թէ ո՞ր տեղացի, որ ձեռագրին 100րդ էջին վրայ կ'արձանագրէ սա Յիւշատակութիւնը, թէ՛

« ԳՐԵՑԱԻ ԹՎԻՆ ՌՃԼԲ (1132 — 551 = 1683)
« Ի ԿԵԿՏԵՄԲԵՐԻ

« ԻՋ »

« ՁԵՌՆԱԳՐԻՆ ԲԺԻՇԿ

ԿԵՓԱՍԻՍ »

Ըստ այսմ՝ կ'ունենանք ահա 17րդ դարու Հայ բժշկական պատմութեան մէջ նոր անուն մ'ալ ԿեփԱՍ ԲԺԻՇԿ, որ՝ վերջընթեր Ձեռագրին մէջ յիշուած ԵՄՏՈՒՐԻ ՈՐԳԻ ԳՐԻԳՈՐ ԲԺԻՇԿԻՆ ժամանակակից է, անկէ 15 տարի վերջը երեցած:

Սակայն գրուածքէն կ'երևի՝ թէ հայերէնի շատ վարժ չէր այս բժիշկը, և այս պատճառաւ շատ մը սխալներով լեցուցած է իր գիրքը. հակառակ ասոր՝ ոչ նուազ գովելի է ինքը, որ փոյթ ունեցած է նշանակաւոր ճանչցուած բժիշկներու գործերէն քաղուածներ ընել ու հատորի մէջ ամփոփել իւր անձին ու արուեստին կրթութեանը համար:

Բաց ի սոյն թուականն, ձեռագրին վերջին էջին վրայ կը կարդանք ՌՃԼԼ (1131 — 551 = 1682) Փետրվար 16:

ՌՈՂԻ (1184 551 = 1685) Ապրիլ 29, և ՌՈՂԶ (1136 551 = 1687) Յունիս 21, Թուականներն ալ, որոնք կեփասի վերոգրեալ Յիշատակարանին ժաւանակակց են. շատ հաւանական է որ ասոնք կեփաս բժշկին գրածն ըլլայ, որովհետեւ առաջին թուականով՝ յնաւ Ներսէս կ'ըսէ, երկրորդովն ալ յնաւ Կերպոս կը գրէ: Անշուշտ երրորդ թուականն ալ անոր մէկ ուրիշ զաւակին ծնունդը կ'ուզէր յիշատակել, սակայն կը պակսի անունը:

Ձեռագրին սկիզբը պարապ թուղթի մը վրայ գրուած է Յիշատակարան մը որ կը յայտնէ՝ թէ պատկանած է այն Միսաքեան Ստեփան աղայի, և անկէ ալ անցած է Կիւրեղ անուն անձի մը՝ որ իր ձեռքովն իսկ կը գրէ այս առթիւ հետեւեալը.

« Գիրք որ կոչի Հէքիմարան / կամ մար-
« դակագմութեան որ պատմէ / տեղն ըզ-
« տեղն մարդոյն յողմածն / և ջիւըն և
« ամենայն մասունքն և բնութիւնն / »

« Այս գիրք ետ ինձ պաղշիշ Միսա-
« քեան / գերարգելի Ըստեփան աղան, /
« ով որ վայել է կարգայ մէկ մէկ Հայր /
« մեղայիւ յիշեսցէ զկենդանիսն / և զննջե-
« ցեալսն Միսաքեան: »

« Երոյ Տոն »

1747

« Կիրեղ »

մուհարրէմի 3ին

Այս թուականը Թրքական է. կը ցուցնէ 1247 տարին և կը համապատասխանէ մօտաւորապէս Վրիստոսի 1829 թուին:

ԺԲ.

ԱՊՈՒՍԱՅԻԴԱՅ ՄԱՐԻԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

b h

ԲԺՇԿԱՐԱՆ ԱՍԱՐԱՅ

Սիրուն, փոքրիկ հատորիկ մ'է այս ձեռագիրը՝ որ 717 թուահամար ունի. կաշէկազմ է՝ խիստ լաւ պահուած, մեծու-թիւնն է՝ 17 հր.մեղր, լայնութիւնը 13 հր.մեղր, իսկ թանձրութիւնը 3 հր.մեղր:

Թուղթն է բամբակեայ, գիրը՝ գեղեցիկ, նոսր, և դիւրաւ ընթեռնելի. կը բաղկանայ 172 թերթերէ, բայց ունի 327 էջ երկ-սին գրութիւն, մնացածները պարապ են:

1825ին սեպտեմբերին եղած է Ս. Ղազարու, և բերուած է հոն Հ. Փիլիպպոս վարդապետ Ալսանի միջոցաւ:

Երկու աշխատութիւն կը պարունակէ այս ձեռագիրը, առաջինն է՝ Ապուսայիղի անունով ճանչցուած Մարդակամարութիւնը, որ քնաւ և քնաւ չի տարբերի Ամիրտու-վաթի (Ողոտ քժկոսրիսն սկիզբը գտնուած Մարդակագմութեան, և երրորդն է՝ Ասար Սեբաստացիի Բժկոսրիսը:

Ապուսայիղի Մարդակագմութիւնը, որու մասին երկար ուսումնասիրութիւն մ'ու-նիմ Հրատարակած 1892ին¹, կը հասնի մինչև 100րդ էջը, անկէ վերջը կը սկսի Ասարի անթուական գործը, որուն Յառա-ջաբանութիւնը միայն կարևոր կը համա-րիմ գրել:

« Բանունն աստուծոյ, զթածին և ողոր-
« մածին, գիրք բժշկական արհեստի, զոր
« սահմանեցին իմաստուն փիլիսոփայն,
« և բժշկական վարդապետն, իմանալ
« զբնութիւն մարդոյն և ինամ տանել
« ցաւածին, առ ի պետս բժշկութեան,
« զի որպէս ի ձեռն խոստովանութեան
« և ճշմարիտ ապաշխարութեան առնուն
« զբժշկութիւն հոգոց, նոյնպէս և ի ձեռն
« բժշկական վարդապետացն, և յօգնու-
« թենէ դեղերացն, ընդունիցին զսողո-
« ջութիւն մարմնոց և զպատեացին ի
« ցաւոցն:

« Որպէս առէ մարգարէն թէ որ ոչ իցէ
« առ. ջ մարմնով, ոչ կարէ ծառայել
« աստուծոյ հոգով: Իսկ այժմ նուստ
« ոգիս յիսոյս յիսոյս աստուծոյ անիւ
« մասս և յօգնամիղ Ասար Սեբաստացիս,
« կամեցայ զընտիրսն հաւաքել և զկար-
« ճառասն և բացայայտել ըստ կարեաց
« մերոց, փոքր ի շատէ, ի քանից իմաս-
« տասիրաց և բժշկական վարդապետացն
« և ինամ տանել ցաւազնեալ անձանց,

1. « ՀԱՆԿԵԱ ԱՄՍՏՐԵԿԱ » 1892 թւ. նոյեմբերի:

« առ ի պէտս բժշկութեան, և նայ որ
« ստեղծողն է տայ զառողջութիւն ամե-
« նայնի ըստ բարի և բարեբար կամաց
« իւրոց, և նմա փառք և գոհութիւն որ
« է օրհնեալ յաւիտեանս և անգրաւ յա-
« Վիտենին, ամէն »:

*

Գիտնալ պէտք է՝ որ Ասար Սեբաս-
տացի՝ Ապուսայիդի Մարգակագմութիւնը
օրինակած, սրբագրած ու կարգաւորած է,
ինչպէս ատենօք ցոյց տուած եմ, շնորհիւ
Վիեննայի Միթարեանց Վանքին սեպհա-
կան Ձեռագիր բժշկարանի մը մէջ գտնուած
մէկ կարեւոր Յիշատակարանին, զոր հրա-
տարակած եմ 1892ին (« Հանդես Ամսո-
րեայ » 1892 թիւ Նոյեմբերի):

Ձեռագիրը ընդօրինակուած է 1625ին
Պարսկաստանի Սպահան քաղաքին մէջ՝
ձեռամբ Տիվրիկի Պողոսի:

Ասար բժիշկ՝ « սարկուագ » տիտղոսն
ունէր, ինչպէս Կ. Գարիկեանի մէկ տե-
ղեկատուութեամբը յայտնուած է, և թէ
1614ին դեռ կ'ապրէր նա՝, որովհետեւ
անոր մէկ յիշատակարանը՝ զոր հրատա-
րակեց Գարիկեան (Բիպլանդիոն 1906,
Բունիս 2), է այսպէս. « Եւ յիշեալ գտնի-
« մաստ Ասար սարկուագ Սիրաստացիս,
« որ գրեցի զնա ի թվ. Ռեֆի ամիս 1064 -
« 551 = 1615) »¹:

*

Ասար իւր բժշկարանը աւարտելէն յե-
տոյ՝ կը գրէ անոր պարունակութեան ցան-
կը, որ ձիֆ գլուխներէ կը բաղկանայ և
է՝ գրեթէ յար և նման ուրիշ բժշկարան-
ներու ունեցած ցանկերուն, զորս քանիցս
ներկայացուցի արդէն այս աշխատութեանս
մէջ:

Այս ցանկէն յետոյ կը կարդանք ձե-
ռագրին ընդօրինակութեան Յիշատակա-
րանը, որ է՝

1. « ՀԱՆԴԵՍ ԱՄՍՐԵԱՅ » 1914 Մայիս:

2. Անդ:

3. Անդ 1914, էջ 282.

« Գրեցաւ մարդակագմոյսին, և թըշ-
« կարուն զիրքս, թվին ՌՃԼԷ (1137 +
« 551 = 1688) Օղոստոսի, Թ. օրն Ե.
« շաբթի ի քաղն Ղայարոյ ի դուռն Սոսր
« Լուսաւորիչ եկեղեցին:

« Ձեռամբ քաղմամբը նաստ Աստուածա-
« տոյ իրիցոյ, ի խղիղոյ տիրացոյ Սարգ-
« սին, Աստուած իւր վայելիչ տացէ և զինք
« աստ ընդ երկայն առօրս տարացէ:

« Արդ ով որ հանդիպեցի նայելով կար-
« դուրմ և օրինակելով, յիշեցի միով ձայր
« մեղայիս զվերայցրեալ Աստուածատուր քա-
« հանայն, և գլխարկուագ Սարգիսն, և ինքն
« վարձս ի Քրիստոսէ առցէ ամէն »:

Թէ՛ Տիվրիկի Պողոսի 1625ին և թէ՛
Աստուածատուր Երէցին 1688ին ընդօր-
նակած այս Մարգակագմութիւնները՝ ան-
շուշտ Ասարի մահէն վերջն եղած պէտք
է ըլլան, որովհետեւ կ'աւանդուի՝ թէ Ա-
սար բժիշկ իբրև թէ Այնթապէն վերա-
դառնալուն՝ Ալիս գետին մէջ խեղդուած
է՝: Արդ՝ եթէ ստույգ է այս աւանդութիւ-
նը՝ Ասարի մահը տեղի ունեցած է ուրեմն
1614էն յետոյ և 1625էն առաջ, այսինքն
Տիվրիկի Պողոսին ընդօրինակութեանն ալ
բաւական ասդին, ինչպէս արդէն ասոր
թողած Յիշատակարանէն կ'իմացուի:

ժԳ.

Բ Ժ Ե Կ Ա Ր Ա Ն

Նկարագրուելու արժանի Ձեռագիր մը
չէ այս Բժշկարանս. Ամիրտովմաթի « Ան-
գիտաց Անպետ » էն մասնակի քաղուածոյ
մ'է. հաստ կաշեկազմ կողքերով ու խիստ
լաւ պահուած:

Կը կրէ 1618 թուահամարը. գիրը նոսր
է ընթեռնի, թուղթը բամբակեայ. կը բաղ-
կանայ 93 թերթէ. ունի 186 էջ գրութիւն
երկսին, լայն լուսանցքներով: Մեծու-
թիւնն է 25 հր.մեղր, լայնութիւնը 19 հր.
մեղր, իսկ թանձրութիւնը՝ հազիւ երկու
հր.մեղր:

Յայտնի չէ՛ թէ ուր և ով գրած է զայն,

բայց յամենայն դէպս 18րդ դարու ընդօրինակութիւն մ'ըլլալու է:

Սեպհականութիւն եղած է Տիգրան Թաւրի՝ որ վենետիկի վանքին նուիրած է զայն, 1243 թուահամար ձեռագրին հետ, մէջը արձանագրելով.

« Յիշատակ Յսկորայ Տիգրան
« Ի Գրատուն Սրբոյն Ղազարոս Ի Վենետիկ
« 1826 Դեկտ. 26 »:

Գործը կը սկսի Աղարիձ բառով և կը վերջացնէ Պարպարոն բառով 139րդ էջին վրայ:

Յետոյ կը գրէ « Յտղացս Բժշկական տր. հետի, որ գրաւորն յայտնէ » վերնագրով մաս մը, որ բառարանածէս գրուած մ'է իրը Համառոտութիւն Անգիտաց: Անպիտի բառերուն:

ՏԻԳՐ. ՎԱՐՈՒՄ Յ. ԹՈՐԿՈՒՄԵԱՆ

Վենետիկ — Մ. Ղազար

24 Դեկտեմբեր 1922

(Շարունժակելի)

ՀՆԱԽՈՍԹԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հ Ի Ն Հ Ա Յ Ո Յ Ք Ո Վ

(Շար. տես Բազմավէպ 1924 էջ 11)

ՈՍԼԱՐԻԿԸ

Ա. — Լ. Ի Յ Բ

Հինգ անգամ յիշուած տեսանք ազաւորէն կամ ըստ բնագրին (ἀστυρχαλος), անգամ մը կոճ ալ կոչուած Աղեքսանդրի պատմութեան մէջ, որոյ դէմ Հայկազեանը նոյն յունարէն բառն ունի: Եւ էր այծի կամ ոչխարի ոտից համանուն ոսկրը, միջին դարուն ըսուած նաև ձանձ, որ խաղ մը կը կազմէր՝ ինչպէս այսօր, և կը խաղացուէր հետեւալ կրկին կերպերով.

1. Գեռնի վրայ բուրբի շրջանակ մը կը գծէին, ներքուստ երեք շառաւիղներ ձգելով: Խաղակիցներէն մին իւր լիցը կը նետէր անոր մէջ՝ չափաւոր հեռաւորու. թնէ մը: Յետոյ միւսը կը նետէր իրենը, հարուածելով հակառակորդին վէզը, և ջնախով զայն դուրս վանել և իւրը ներս պահել: Թունական հին ձեռի մը վրայ երեք կանայք այս խաղարկը կը խաղան:

2. Կար կոճի ուրիշ խաղ մ'ալ: Անոր չորս երեսներուն վրայ նշանակուած էին չորս անհաւասար թուանշաններ: Հարկաւ ասոնք ներկով շինուած էին, որով ս. Բարսեղ այդ ոսկրները « ներկածոյ » կը կոչէր: Խաղացողն աղոցմէ չորս հատը միանգամայն կ'առնուր և կը ձգէր. և հանդիպած թուերու յարմարութեան հաւմանով կը շահէր աւելի կամ պակաս: Հին պատկերի մը մէջ անձ մը մատներուն վերեւ առած լիցերը, նետելու հետ է:

Անոյ մէջ գտուեցաւ տղայի մը կմախքը, որոյ հետ թաղած էին կաւեղէն անօթ մը, լիցերով լի՝ որ էին անոր սիրական խաղակիցները: Մահկանց խաղերը միասին թաղել՝ սովորական էր նաև այլ ազգերու: Եւ ուրիշ ապացոյց մ'է այս՝ նոյն խաղի մեր մէջ գոյութեան, և միանգամայն յաւատարմուն մինչև միջին դար և ցայսօր, ինչպէս կը տեսնենք հայ գաւառաց մէջ:

Սիւ դարուն՝ Խաչատուր Կեչառացին կ'որոշէ իրարմէ լիցն ու կոճը, գրելով այսպէս. « ճակգարանս » որ է լից ոսկրեայ, և կոճ՝ որով տղայքն խաղան »: Հակադարանի մեկնութիւնը սխալ է բոլորովին: Բայց մինչև ցարդ Հայաստանի մէջ կը գտանէ կոճէն լիցը՝ անուամբ և արուեստով, երկրորդին մէջ կապար լիցը՝ ներկով: և զոր ի Շիրակ լիցը կը կոչեն, ի Մուշ հոս, և անով կը հարուածեն ու կը վանեն կոճերը կամ ձուները շրջանակէն դուրս: Եթէ հսկն է լիցնելու սովորու.

1. Առնեն բոյ, — 2. Dar. Tulus, — 3. Անդ, — 4. Նոյն՝ I, 1561-62, — 5. Հիւզ. Լից, — 6. Աստ. յոգ. Ե՝